# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
# ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*Հեռ. (0281) 2-22-80, (0281)2-34-46* Գլաձոր համայնք, 33փող, 41 շենք


*Նիստ թիվ 09* «14» սեպտեմբերի 2021թ.

## ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 95

## *ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 9 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով՝

## ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել Գլաձոր համայնքի ավագանու 2021 թվականի սեպտեմբերի 14-ի թիվ 9 արտահերթ նիստի հետևյալ օրակարգը.

1. Գլաձոր համայնքի ավագանու 2021 թվականի թիվ 9 արտահերթ նիստի օրակարգը հաստատելու մասին:

2. Գլաձոր համայնքի 2021 թվականի տարեկան բյուջեում վերաբաշխում կատարելու մասին:

3. Գլաձոր համայնքի Գետափ բնակավայրի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի նշանակության 0.002 հա ընդհանուր օգտագործման հողի նպատակային նշանակությունը փոխելու մասին:

4. Կամավոր խնդրի լուծման իրականացմանը համաձայնություն տալու և ֆինանսական հատկացումներ կատարելու մասին:

5. Գլաձոր համայնքի սեփականություն հանդիսացող որոշ հողերի նպատակային նշանակությունը փոփոխելու համար համաձայնություն տալու մասին:

6. Գլաձոր համայնքի Գետափ բնակավայրի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության 0.07505 հա վարելահողը մրցույթով վարձակալության տրամադրելու համար թույլտվություն տալու մասին:

7. Գլաձոր համայնքի Գետափ բնակավայրի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի նշանակության 0.12319 հա այլ հողը աճուրդով օտարելու համար թույլտվություն տալու մասին:

8. «Գլաձոր համայնքային տնտեսություն» ՀՈԱԿ-ին շինանյութ տրամադրելու մասին:

| Ավագանիներ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Գաբրիելյան Ա. | | | |
| Գասպարյան Ք. | | | |
| Գևորգյան Ա. | | | |
| Լևոնյան Վ. | | | |
| Մանասերյան Կ. | | | |
| Մարգարյան Ա. | | | |
| Մարգարյան Գ. | | | |
| Մարտիրոսյան Մ. | | | |
| Սարգսյան Է. | | | |
| Սաֆարյան Ե. | | | |
| Վարդանյան Գ. | | | |

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄՈՎՍԻՍՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*Հեռ. (0281) 2-22-80, (0281)2-34-46 Գլաձոր համայնք, 33փող, 41 շենք*

***Նիստ թիվ 09*** *«14» սեպտեմբերի 2021թ.*

**ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 96-Ն**

## ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերի պահանջներով՝

**ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝**

Գլաձոր համայնքի 2021 թվականի հունվարի 21-ի թիվ 04-Ն որոշմամբ հաստատված բյուջեում կատարել հետևյալ վերաբաշխումը.

1. Պակասեցնել գործառնական դասակարգման՝ 11.01.01 բաժնի տնտեսագիտական դասակարգման 4891 /պահուստային միջոցներ/ հոդվածից 5000.0 /հինգ միլիոն/ ՀՀ դրամ:

2. Ավելացնել գործառնական դասակարգման՝

10.07.01 բաժնի տնտեսագիտական դասակարգման 4729 /այլ նպաստներ բյուջեից/ հոդվածին 3000.0 /երեք միլիոն / ՀՀ դրամ,

01.06.01 բաժնի տնտեսագիտական դասակարգման 4637 /դրամաշնորհներ/ հոդվածին 2000.0 /երկու միլիոն/ ՀՀ դրամ:

| Ավագանիներ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Գաբրիելյան Ա. | [signature] | | |
| Գասպարյան Ք. | [signature] | | |
| Գևորգյան Ա. | [signature] | | |
| Լևոնյան Վ. | [signature] | | |
| Մանասերյան Կ. | [signature] | | |
| Մարգարյան Ա. | [signature] | | |
| Մարգարյան Գ. | [signature] | | |
| Մարտիրոսյան Մ. | [signature] | | |
| Սարգսյան Է. | [signature] | | |
| Սաֆարյան Ե. | [signature] | | |
| Վարդանյան Գ. | [signature] | | |

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄՈՎՍԻՍՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*Հեռ. (0281) 2-22-80, (0281)2-34-46* Գլաձոր համայնք, 33փող, 41 շենք

*Նիստ թիվ 09* *«14» սեպտեմբերի 2021թ.*

# ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 97

## *ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԵՏԱՓ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0.002 ՀԱ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀՈՂԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ և 31-րդ կետերի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1918-Ն որոշման հավելվածով հաստատված կարգի 17-րդ կետի պահանջը և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2001 թվականի օգոստոսի 13-ի թիվ 599 որոշմամբ ստեղծված Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի 2021 թվականի օգոստոսի 18-ի N 179 դրական եզրակացությունը՝

### ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Գլաձոր համայնքի Գետափ բնակավայրի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի նշանակության 0.002 հա ընդհանուր օգտագործման հողը /կադաստրային ծածկագիր՝ 10-014-0605-0002/ փոխադրել էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերի կատեգորիա, գործառնական նշանակությունը՝ էներգետիկայի հողեր՝ ԼՏԵ-ի (տրանսֆորմատորային ենթակայան՝ լրակազմ) տեղադրման համար:

| Ավագանիներ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Գաբրիելյան Ա. | [signature] | | |
| Գասպարյան Ք. | [signature] | | |
| Գևորգյան Ա. | [signature] | | |
| Լևոնյան Վ. | [signature] | | |
| Մանասերյան Կ. | [signature] | | |
| Մարգարյան Ա. | [signature] | | |
| Մարգարյան Գ. | [signature] | | |
| Մարտիրոսյան Մ. | [signature] | | |
| Սարգսյան Է. | [signature] | | |
| Սաֆարյան Ե. | [signature] | | |
| Վարդանյան Գ. | [signature] | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄՈՎՍԻՍՅԱՆ

*08914325*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
# ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*Հեռ. (0281) 2-22-80, (0281)2-34-46* Գլաձոր համայնք, 33փող, 41 շենք

*Նիստ թիվ 09* *«14» սեպտեմբերի 2021թ.*

## ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 98

## ԿԱՄԱՎՈՐ ԽՆԴՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ և 7-րդ կետերի պահանջներով, քննարկելով Գլաձոր համայնքի Վերնաշեն բնակավայրի միջնակարգ դպրոցի տնօրենի և համայնքի բնակիչ Յուրա Վարդանյանի կողմից ներկայացված դիմումները, հիմք ընդունելով Վայոց ձորի մարզպետի 2021 թվականի սեպտեմբերի 14-ի N 01 /09.2/5930-2021 գրությունը, Գլաձոր համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 16-ի թիվ 45-Ա որոշմամբ հաստատված կարգի 12-րդ և 21-րդ կետերի պահանջները, Գլաձոր համայնքի ավագանու «Սոցիալական, առողջապահության և բնության պահպանության հարցերի» մշտական հանձնաժողովի 2021 թվականի սեպտեմբերի 14-ի դրական եզրակացությունը՝

### ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Տալ համաձայնություն կամավոր խնդրի լուծման իրականացմանը և Գլաձոր համայնքի 2021 թվականի տարեկան բյուջեի 10.07.01 բաժնի տնտեսագիտական դասակարգման 4729 /այլ նպաստներ բյուջեից/ հոդվածից հատկացնել ֆինանսական օգնություն /հատկացում/.

1) սոցիալապես անապահով վիճակում գտնվող, առողջական խնդիրներ, նոր ծնված երեխաներ ունեցող բնակիչներին՝ համաձայն սույն որոշման հավելվածի,

2) Ուկրաինայի Խարկով քաղաքում 2021 թվականի հոկտեմբեր ամսին կայանալիք «Kharkov Open» կարատեի միջազգային մրցաշարին Գլաձոր համայնքի բնակավայրերից մեկնող պատանիների ծախսերը հոգալու համար՝ մարզիչ Յուրա Վարդանյանին 300 000 /երեք հարյուր հազար/ ՀՀ դրամ,

3) տարեցների օրվա կապակցությամբ՝ Գլաձոր բնակավայրի բնակիչ Քյարամ Գաբրիելի Սարգսյանին և Վերնաշեն բնակավայրի բնակիչ Գեղեցիկ Սարգիսի Բաբայանին 30 000-ական /երեսուն հազար/ ՀՀ դրամ,

4) Գլաձոր բնակավայրի բնակիչ Հարութ Ռուստամի Նազարյանին 10 000 /տաս հազար/ ՀՀ դրամ՝ «Հայաստանի Հանրապետության վարչապետի գավաթ» սիրողական խճուղային հեծանվավազքի մրցաշարին մասնակցելու համար թույլատրվող սպորտային գլխարկի ձեռքբերման նպատակով,

5) Գլաձոր համայնքի զոհված հերոսների հիշատակը հավերժացնող պանթեոնների կառուցման համար՝ որպես համայնքի կողմից դրամական օգնություն, Վահրամ Անդրեասի Հարությունյանի անունով,

ՎՏԲ-Հայաստան բանկում բացված 16016008952204 հաշվեհամարին փոխանցել 3 300 000 /երեք միլիոն երեք հարյուր հազար/ ՀՀ դրամ:

2. Գլաձոր համայնքի 2021 թվականի տարեկան բյուջեի 09.01.01 բաժնի տնտեսագիտական դասակարգման 4637 /դրամաշնորհներ/ հոդվածից 260 000 /երկու հարյուր վաթսուն հազար/ ՀՀ դրամ հատկացնել /փոխանցել/ Վերնաշեն բնակավայրի միջնակարգ դպրոցին՝ տարրական դասարանների համար սեղաններ և աթոռներ պատրաստելու նպատակով:

| Ավագանիներ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Գաբրիելյան Ա. | | | |
| Գասպարյան Ք. | | | |
| Գևորգյան Ա. | | | |
| Լևոնյան Վ. | | | |
| Մանասերյան Կ. | | | |
| Մարգարյան Ա. | | | |
| Մարգարյան Գ. | | | |
| Մարտիրոսյան Մ. | | | |
| Սարգսյան Է. | | | |
| Սաֆարյան Ե. | | | |
| Վարդանյան Գ. | | | |

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ա. ՄՈՎՍԻՍՅԱՆ**

Հավելված
ՀՀ Վայոց ձորի մարզի
Գլաձոր համայնքի ավագանու
2021 թվականի սեպտեմբերի 14-ի թիվ 98-Ա որոշման

**ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻՆ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ 10.07.01 ԲԱԺՆԻ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ 4729 /ԱՅԼ ՆՊԱՍՏՆԵՐ ԲՅՈՒՋԵԻՑ/ ՀՈԴՎԱԾԻՑ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԲԱՇԽՈՒՄԸ**

**1. Սոցիալապես անապահով վիճակում գտնվող և առողջական խնդիրներ ունեցող բնակիչներ՝**

1) Ազգանուշ Գուրգենի Սահակյան՝ Գետափ բնակավայր – 30 000 /երեսուն հազար/ ՀՀ դրամ
2) Արշալույս Սամսոնի Ստեփանյան՝ Գետափ բնակավայր – 20 000 /քսան հազար/ ՀՀ դրամ
3) Արսեն Ժորայի Գալստյան՝ Գլաձոր բնակավայր – 20 000 /քսան հազար/ ՀՀ դրամ
4) Արամ Մագելի Մարգարյան՝ Գետափ բնակավայր – 50 000 /հիսուն հազար / ՀՀ դրամ
5) Նվարդ Արամայիսի Գևորգյան՝ Վերնաշեն բնակավայր – 40 000 /քառասուն հազար/ ՀՀ դրամ
6) Աննա Օնիկի Զաքարյան՝ Գլաձոր բնակավայր – 40 000 /քառասուն հազար/ ՀՀ դրամ
7) Անուշավան Խաչիկի Սայադյան՝ Գլաձոր բնակավայր – 30 000 /երեսուն հազար/ ՀՀ դրամ
8) Կարինե Սիմոնի Թադևոսյան՝ Գլաձոր բնակավայր – 30 000 /երեսուն հազար/ ՀՀ դրամ
9) Անժելա Սոսի Մկրտչյան՝ Գետափ բնակավայր – 40 000 /քառասուն հազար / ՀՀ դրամ
10) Մելինե Ատոմի Ղազարյան՝ Գետափ բնակավայր – 30 000 /երեսուն հազար/ ՀՀ դրամ
11) Արթուր Մյասնիկի Ավետիսյան՝ Գլաձոր բնակավայր – 20 000 /քսան հազար/ ՀՀ դրամ
12) Ռազմիկ Սուքիասի Հովհաննիսյան՝ Գլաձոր բնակավայր – 20 000 /քսան հազար/ ՀՀ դրամ:

**2. Համայնքում նոր ծնված երեխաներ ունեցող ընտանիքներին՝**

1) Արթուր Աղվանի Ստեփանյան՝ Գետափ բնակավայր – 25 000 /քսանհինգ հազար/ ՀՀ դրամ
2) Նարեկ Ջիվանի Մարտիրոսյան՝ Գլաձոր բնակավայր – 25 000 /քսանհինգ հազար/ ՀՀ դրամ
3) Անի Գուրգենի Քոչարյան՝ Գլաձոր բնակավայր – 25 000 /քսանհինգ հազար/ ՀՀ դրամ
4) Հակոբ Արթուրի Թովմասյան՝ Վերնաշեն բնակավայր – 25 000 /քսանհինգ հազար/ ՀՀ դրամ
5) Էդգար Ռազմիկի Հարությունյան՝ Գետափ բնակավայր – 25 000 /քսանհինգ հազար/ ՀՀ դրամ
6) Գոհար Մկրտիչի Մարտիրոսյան՝ Վերնաշեն բնակավայր – 25 000 /քսանհինգ հազար/ ՀՀ դրամ
7) Սիրանուշ Ստյոպայի Բարսեղյան՝ Գետափ բնակավայր – 25 000 /քսանհինգ հազար/ ՀՀ դրամ
8) Սերգեյ Տիգրանի Ղազարյան՝ Գլաձոր բնակավայր – 25 000 /քսանհինգ հազար/ ՀՀ դրամ
9) Սամվել Վալենտինի Թադևոսյան՝ Գետափ բնակավայր – 25 000 /քսանհինգ հազար/ ՀՀ դրամ
10) Նելլի Օնիկի Մարգարյան՝ Գետափ բնակավայր – 25 000 /քսանհինգ հազար/ ՀՀ դրամ
11) Փիրուզ Սամվելի Եգանյան՝ Գետափ բնակավայր – 25 000 /քսանհինգ հազար/ ՀՀ դրամ:

**Ընդամենը - 645 000 /վեց հարյուր քառասունհինգ հազար/ ՀՀ դրամ:**

**Համայնքի ղեկավար՝** **Ա. Մովսիսյան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
# ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*Հեռ. (0281) 2-22-80, (0281)2-34-46* Գլաձոր համայնք, 33փող, 41 շենք


***Նիստ թիվ 09*** *«14» սեպտեմբերի 2021թ.*

## ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 99

## *ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՈՐՈՇ ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ, 31-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետի պահանջներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1918-Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջները՝

## ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Օդային էլեկտրական գծերի հենարաններ տեղադրելու նպատակով՝ Գլաձոր համայնքի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության ներքոնշյալ հողերի նպատակային նշանակությունը էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերի կատեգորիա /գործառնական նշանակությունը՝ էներգետիկայի հողեր/ փոխադրելու համար տալ համաձայնություն.

1) Գլաձոր համայնքի Գետափ բնակավայրի վարչական տարածքում գտնվող գյուղատնտեսական նշանակության 0.009409 հա արոտավայր /կադաստրային ծածկագիր 10-014-0101-0017/,

2) Գլաձոր համայնքի Գլաձոր բնակավայրի վարչական տարածքում գտնվող գյուղատնտեսական նշանակության 0.003487 հա այլ հողատեսք /կադաստրային ծածկագիր 10-015-0166-0035/,

3) Գլաձոր համայնքի Գլաձոր բնակավայրի վարչական տարածքում գտնվող գյուղատնտեսական նշանակության 0.003487 հա այլ հողատեսք /կադաստրային ծածկագիր 10-015-0166-0036/:

| Ավագանիներ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Գաբրիելյան Ա. | | | |
| Գասպարյան Ք. | | | |
| Գևորգյան Ա. | | | |
| Լևոնյան Վ. | | | |
| Մանասերյան Կ. | | | |
| Մարգարյան Ա. | | | |

| | | | |
|---|---|---|---|
| Մարգարյան Գ. | | | |
| Մարտիրոսյան Մ. | | | |
| Սարգսյան Է. | | | |
| Սաֆարյան Ե. | | | |
| Վարդանյան Գ. | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄՈՎՍԻՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*Հեռ. (0281) 2-22-80, (0281)2-34-46 Գլաձոր համայնք, 33փող, 41 շենք*

*Նիստ թիվ 09* *«14» սեպտեմբերի 2021թ.*

**ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 100**

**ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԵՏԱՓ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0.07505 ՀԱ ՎԱՐԵԼԱՀՈՂԸ ՄՐՑՈՒՅԹՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջով և Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 76-րդ հոդվածի 3-րդ մասով՝

**ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝**

1. Տալ թույլտվություն Գլաձոր համայնքի Գետափ բնակավայրի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության 0.07505 հա վարելահողը /կադաստրային ծածկագիր 10-014-0056-0081/ մրցույթով վարձակալության տրամադրելու համար:
2. Մրցույթի մեկնարկային գինը սահմանել հողամասի զուտ եկամտի 2000 %-ը՝ 68 500 /վաթսունութ հազար հինգ հարյուր/ ՀՀ դրամ:
3. Առաջարկել համայնքի ղեկավարին՝ «Հրապարակային սակարկությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-28-րդ հոդվածի համաձայն և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգով /բաժին VIII/ կազմակերպել հողամասի վարձակալության մրցույթ և մրցույթի մասին հայտարարություն տալ Հայաստանի Հանրապետություն օրաթերթում:

| Ավագանիներ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Գաբրիելյան Ա. | | | |
| Գասպարյան Ք. | | | |
| Գևորգյան Ա. | | | |
| Լևոնյան Վ. | | | |
| Մանասերյան Կ. | | | |
| Մարգարյան Ա. | | | |
| Մարգարյան Գ. | | | |
| Մարտիրոսյան Մ. | | | |
| Սարգսյան Է. | | | |
| Սաֆարյան Ե. | | | |
| Վարդանյան Գ. | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄՈՎՍԻՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*Հեռ. (0281) 2-22-80, (0281)2-34-46* Գլաձոր համայնք, 33փող, 41 շենք

*Նիստ թիվ 09* *«14» սեպտեմբերի 2021թ.*

## ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 101

## ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԵՏԱՓ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0.12319 ՀԱ ԱՅԼ ՀՈՂԸ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջով և Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերի պահանջներով՝

### ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Տալ թույլտվություն Գլաձոր համայնքի Գետափ բնակավայրի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի նշանակության 0.12319 հա այլ հողը /կադաստրային ծածկագիր 10-014-0056-0082/ աճուրդով օտարելու համար:

2. Աճուրդի մեկնարկային գինը սահմանել հողամասի կադաստրային արժեքի 100%-ը՝ 1 504 150 /մեկ միլիոն հինգ հարյուր չորս հազար հարյուր հիսուն/ ՀՀ դրամ:

3. Առաջարկել համայնքի ղեկավարին՝ օրենքով սահմանված կարգով կազմակերպել հողամասի աճուրդ-վաճառք և աճուրդի մասին հայտարարություն տալ Հայաստանի Հանրապետություն օրաթերթում:

| Ավագանիներ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Գաբրիելյան Ա. | | | |
| Գասպարյան Ք. | | | |
| Գևորգյան Ա. | | | |
| Լևոնյան Վ. | | | |
| Մանասերյան Կ. | | | |
| Մարգարյան Ա. | | | |
| Մարգարյան Գ. | | | |
| Մարտիրոսյան Մ. | | | |
| Սարգսյան Է. | | | |
| Սաֆարյան Ե. | | | |
| Վարդանյան Գ. | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄՈՎՍԻՍՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ**
**ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

*Հեռ. (0281) 2-22-80, (0281)2-34-46* Գլաձոր համայնք, 33փող, 41 շենք

*Նիստ թիվ 09* *«14» սեպտեմբերի 2021թ.*

## ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 102

### «ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ» ՀՈԱԿ-ԻՆ ՇԻՆԱՆՅՈՒԹ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի և 42-րդ կետի պահանջներով՝

**ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝**

Գլաձորի համայնքապետարանի գույքացուցակում (ապրանքացուցակ) առկա շինանյութերից, Գլաձոր համայնքում /բնակավայրերում/ իրականացվելիք շինարարական աշխատանքներում օգտագործելու համար, տրամադրել «Գլաձոր համայնքային տնտեսություն» ՀՈԱԿ-ին՝ համաձայն սույն որոշման հավելվածի:

| Ավագանիներ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Գաբրիելյան Ա. | | | |
| Գասպարյան Ք. | | | |
| Գևորգյան Ա. | | | |
| Լևոնյան Վ. | | | |
| Մանասերյան Կ. | | | |
| Մարգարյան Ա. | | | |
| Մարգարյան Գ. | | | |
| Մարտիրոսյան Մ. | | | |
| Սարգսյան Է. | | | |
| Սաֆարյան Ե. | | | |
| Վարդանյան Գ. | | | |

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ա. ՄՈՎՍԻՍՅԱՆ**

**Հավելված**
**ՀՀ Վայոց ձորի մարզի**
**Գլաձոր համայնքի ավագանու**
**2021 թվականի սեպտեմբերի 14-ի թիվ 102 որոշման**

«ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ» ՀՈԱԿ-ԻՆ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՇԻՆԱՆՅՈՒԹԻ ՑԱՆԿ

| Հ/Հ | Անվանումը | Չափի միավորը | Քանակը | Նշումներ |
|---|---|---|---|---|
| 1 | Ցեմենտ | Պարկ | 14 | |
| 2 | Խամ քար (տուֆից քար) | քմ | 350 | |
| 3 | Ուղղանկյուն խողովակ (40x20x1.5) | մ | 24 | Ա 3107708098 հաշիվ ապրանքագիր |

**Համայնքի ղեկավար՝** **Ա. Մովսիսյան**